

ՄՇԱԿՈՒԹԱՓՈՒՍԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐ ՖՐԵԶՆՈՅԻ ՇՐՋԱՆԻ Ա. ԵՒ Բ. ՍԵՐՆԴԻ ՀԱՅԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1900-1930ականներ)

ՅԱՄՄԻԿ ԵՍԱՅԵԱՆ
hasmiktk@yahoo.com

ՄՈՒՏՔ

Ֆրեզնոսն՝ իբրև հազարատր տարագիր հայերի հանգրուան, ուրոյն նկարագիր ունէր ԱՄՆ միա հայաշատ շրջանների (county) համեմատութեամբ: Դա ընդգծուած դրսեւորումներ ունեցաւ նաեւ մշակութային ինքնութեան պահպանման հարցում: Պանդխտութեան առաջին իսկ տարիներից սկսած (1880ականներ)՝ հայ գաղթականութեան համար կարեւոր խնդիր է եղել ազգային-մշակութային ինքնութեան պահպանումը: Հայրենիքից հեռու հայութիւնը փորձել է հնարատրինս խոսափել օտարուելոց եւ չհեռանալ հայկական արմատներից: Սակայն նոր միջավայրին համարկուելու կենսական անհրաժեշտութիւնը ժամանակի ընթացքում բերել է անխոսափելի մի երեւոյթի, որը ընդունուած է կոչել մշակութափոխում (acculturation):՝ Սոյն յօդուածում փորձել ենք միջանի օրինակով ներկայացնել, թէ ինչպէս էր արտայայտուած մշակութափոխումը Ֆրեզնոյի առաջին եւ երկրորդ սերնդի հայերի շրջանում եւ թէ ինչպէս էր այդ երեւոյթը անդրադառնում մշակութային ինքնութեան պահպանման վրայ:

Խօսելով ընդհանրապէս Մ. Նահանգներում հայ գաղթականութեան մշակութափոխման գործընթացի մասին՝ Ռոբերտ Միրաքը օգտագործում է «հայ ամերիկացի» (Armenian American²) բնորոշ արտայայտութիւնը: Թէ-եւ առաջին սերնդի գաղթականները ծագում էին օտար երկրում վառ պահել ազգային ոգին ու հայկականութիւնը, իրենց զաւակներին դաստիարակում այն գաղափարներով, որ պէտք է բոլոր թէլերով կապուած լինել Հայ Եկեղեցուն, հայ լեզուին ու մշակոյթին, այնուամենայնիւ ամերիկեան միջավայրը թելադրում էր իր կանոնները՝ աստիճանաբար ձեւատրելով նոր անհատներ՝ «հայ ամերիկացիներ», որոնք ուզած թէ չուզած ապրում էին երկու կենցաղավարութեամբ՝ հայկական եւ ամերիկեան:

Մինչեւ 1930ականները՝ տնտեսական մեծ ճգնաժամի տարիները, Կալիֆորնիայի հայութեան ընկերատնտեսական եւ հոգեւոր-մշակութային կենտրոնը Ֆրեզնոյի շրջանն էր: Այդ պատճառով ժամանակի որոշ հեղինակներ, յօդաւածագիրներ, խօսելով Կալիֆորնիայում հաստատուած հայութեան մասին, նկատի են ունեցել հենց Ֆրեզնոյի հայութեանը, այսինքն՝ յաճախ գրելով Կալիֆորնիայի հայ գաղութ՝ հասկացել են Ֆրեզնոյի եւ շրջակայքի հայ գաղութը: Ուստի մեր ուսումնասիրութեան մէջ քննարկուող թեմայի առանցք ենք դարձրել վերջինս:

Ընդհանրապես ազգային եւ մշակութային ինքնութեան հարցի տեսութեամբ զբաղուողները ինքնութեան դրսեւորումն ու զարգացումը դիտարկում են այլութեան հետ յարաբերութեան մէջ. «... ինքնութիւնը, եթէ կայ, ինքն իր վրայ փակ մենութիւնը չէ,- գրում է Գրիգոր Պըլպեանը,- ինքնութիւնը չէ միայն օրինակ նոյնութիւնը, որուն հետ կը շփոթուի յաճախ, այլ հոլովոյթ մըն է այլութեան հետ, որ զինք կը դարձնէ խնդրական, անմիատր»³: Իր հերթին Վեր. Փոլ Հայտօսութեանը առանձնացնում է սփիւղքահայութեան ինքնութեան կերտման միջանի կարեւոր գործօններ: Օրինակ՝ ինչպէ՞ս է հայն իրեն ներկայացնում ընդունող հասարակութեան մէջ, ինչպէ՞ս է օտարը՝ տեղացին, վերաբերում հային, ինչպէ՞ս է հայը ըմբռնում օտարին՝ տեղացիին. մի բան է, երբ նա իրեն անիլ բարձր է կարծում ընդունող հասարակութիւնից, մէկ այլ բան՝ երբ իրեն ստորադաս է զգում⁴:

Այս իմաստով հարկ է յատուկ շեշտել, որ ամբողջ Մ. Նահանգներում հայերը հենց Ֆրեզնոյում են հանդիպել խիստ բացայայտ եւ երկարատեւ անհանդուրժողական վերաբերմունքի, այլ կերպ ասած՝ ազգային խտրականութեան: Այնտեղ հաստատուելու առաջին իսկ տարիներից նրանք տասնամեակներ շարունակ չեն ընդունուել, մերժուել են ու ճնշուել ամերիկեան պետական, հասարակական, կրօնական կազմակերպութիւններում եւ միութիւններում⁵: Ուստի Ֆրեզնոյի հայերի մշակութափոխման գործընթացի մասին խօսելիս անպայման պէտք է հաշուի առնել այս հանգամանքը, քանի որ ազգային խտրականութիւնը որոշ չափով պայմանատրել է մշակութափոխման տարբեր իրադարձութիւնները նահանգում:

ԻԱՌՆԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդհանրապես խառնամուսնութիւնների քանակով կարելի է որոշակի պատկերացում կազմել տուեալ երկրում բնիկների եւ ներգաղթած այլազգիների փոխյարաբերութեան ու փոխընկալման, համարկումի մասին:

Նշենք, որ ի տարբերութիւն ԱՄՆ արեւելեան շրջանների՝ Ֆրեզնոյում խառնամուսնութիւնների թիւը մեծ չէր: Եթէ, օրինակ, 1908-12ին Նիւ Եորք-բնակուող առաջին սերնդի հայերի 164 ամուսնութիւններից 16ը (9,6 տոկոսը) օտարազգիների հետ էր, ապա նոյն շրջանում Ֆրեզնոյաբնակ հայերի 20 ամուսնութիւններից ընդամէնը մէկն էր օտարի հետ⁶:

Ուշագրաւ է, որ Լա Պիլեի տուեալներով՝ 1905ին Ֆրեզնոյում ամուսնացող տղամարդկանց համար միջին տարիքը 25ն էր, իսկ կանանց՝ 19ը: 1910ին արդէն միջին տարիք էր համարում տղամարդկանց համար՝ 27ը, կանանց՝ 21ը, իսկ 1915ին՝ տղամարդկանց՝ 32ը, կանանց՝ 25ը⁷: Ամուսնացողների միջին տարիքի աճի այս ցուցանիշը խօսում է այն մասին, որ մերիկեան միջավայրին աստիճանաբար համարկումով որդեգրում էին նրա սովորոյթներն ու կարգերը, երբ, օրինակ, Արեւմտեան Հայաստանում օրիորդի համար անպատուաբեր էր 19ից յետոյ չամուսնացած լինելը:

Ըստ ուսումնասիրության Կալիֆորնիայում խառնամուսնությունների դիմել են առաելապէս հայ տղամարդիկ: 1907ին Հայրենիքը հրապարակել է նահանգի հայության խառնամուսնությունների ցուցակը: Ցուցակում չորս տասնեակից անելի անուններ են, որոնցից ընդամէնը երեքն են կանայք⁸: Դա պայմանաւորում էր նախ այն հանգամանքով, որ մինչեւ Ա. Համաշխարհայինը տղամարդիկ Կալիֆորնիայում թուով գերակշռում էին: Ընդ որում՝ ներգաղթողների մէջ զգալի թիւ էին կազմում չամուսնացած երիտասարդները: Ֆրեզնոյաբնակ Հ. Նշիկեանի 1897ի վիճակագրութեան համաձայն՝ Ֆրեզնո քաղաքում կար 235 մեծահասակ հայ՝ 151 տղամարդ, որոնցից 88ը՝ ամուսնու երիտասարդներ, եւ 84 կին⁹: Մինչեւ 1930ականներ տղամարդկանց եւ կանանց թուային այս համամասնութիւնը խառնամուսնություններում էական փոփոխութիւններ չի կրել: Բացի այդ՝ տղամարդիկ աշխատանքի բերումով անելի շատ էին շփում օտարների հետ, քան կանայք եւ սովորաբար անելի լաւ էին տիրապետում անգլերէնին:

Խառնամուսնությունների վերաբերեալ վիճակագրական այս պատկերը հաստատում է նաեւ այլ հետազոտողների տուեալներով: Ըստ Լա Պիեռի՝ 1904-28՝ Ֆրեզնոյի շրջանում հայերի խառնամուսնությունների թիւը եղել է ընդհանուր ամուսնությունների ընդամէնը 3,4 տոկոսը, ինչը հետազոտողին հիմք է տալիս եզրակացնելու, որ նշուած ժամանակահատուածում հայերը հազուադէպ են դիմել խառնամուսնությունների¹⁰: Ընդ որում՝ այդ խառնամուսնությունների մեծ մասը տեղի է ունեցել 1920ից յետոյ:

Մէկ այլ ուսումնասիրող՝ Հերլը Նելսընը, գրում է, որ 1920-40ականներին հայերի 465 ամուսնություններից 28ն էին օտարների հետ, մօտ 6 տոկոսը: Նոյն թուականներին Ֆրեզնոյի շրջանում կատարուած հայերի 28 խառնամուսնություններից 17ը հայ տղամարդկանց մասնակցութեամբ էին: Ըստ որում՝ վիճակագրութեան մէջ հեղինակը ներառել է առաջին եւ երկրորդ սերնդի ներկայացուցիչներին: Ստացուած արդիւնքներով՝ մինչեւ 1931 ամուսնացած հայերի մէջ գերակշռում էին առաջին սերնդի ներկայացուցիչները. 1931ին ամուսնացածների 59,21 տոկոսը Ա. սերնդը էին¹¹:

Ֆրեզնոյի Շրջանի Հայերի Խառնամուսնությունները 1920-1940¹²

Տարի	Ամուսնությունների ընդհանուր քանակ	Խառնամուսնությունների քանակ	Խառնամուսնությունները տոկոսով
1920	117	1	0.85
1925	74	4	5.40
1930	42	2	4.76
1931	38	0	0.00
1932	42	2	4.76
1933	40	5	12.50
1935	45	5	11.11
1940	67	9	13.43

Համադրելով մեր ունեցած տուեալները, կարելի է ասել, որ խառնամուսնութիւնների թիւը Ֆրեզնոյում կտրուկ աճում է 1930ականներից եւ զազաթնակէտին հասնում Բ. Համաշխարհային Պատերազմի տարիներին: Այսպէս, օրինակ՝ Մեթիու Ջընդեանի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ 1940ին Ֆրեզնոյի շրջանում հայերի խառնամուսնութիւնների թիւը կրկնապատկուել է նախորդ տասնամեակի համեմատ: Եթէ 1930ին այլազգիների հետ էր Ֆրեզնոյի շրջանում կատարուած 48 ամուսնութիւններից 5ը (10,4%), ապա 1940ի 68ից՝ 10ը խառնամուսնութիւն էին (14,7%)¹³:

Ֆրեզնոյում հայերի խառնամուսնութիւնների համար լուրջ խոչընդոտ էր ընկերային մեկուսացումը, որը իր հերթին պայմանաւորուած էր ազգային խտրականութեամբ: Դրա մասին է վկայում այն փաստը, որ հայերի հետ ամուսնացող օտարները սովորաբար Կալիֆորնիայից չէին, եւ այս իմաստով ազգային խտրականութեան խնդիր չկար: Օրինակ՝ 1939ին խառնամուսնութեան դիմած հայ կանանց 83,3%ը ամուսնացել էր այլ նահանգներում ծնուած օտարների հետ, կամ, օրինակ՝ 1945ին հայ կանանց հետ ամուսնացող օտար տղամարդկանց 69,23%ը զինուորականներ էին, որոնք բոլորը ծնուել էին Կալիֆորնիայից դուրս¹⁴: Իդէպ, Բ. Համաշխարհային Պատերազմի տարիներին օտար զինուորականների հետ ամուսնանալու փաստով պայմանաւորուած խառնամուսնութիւններում զգալիօրէն աւելանում է հայ կանանց թիւը՝ այդ ընթացքում նոյնիսկ գերազանցելով խառնամուսնութեան դիմող հայ տղամարդկանց թուին:

Խառնամուսնութիւններում մշակութափոխման ինչ-ինչ դրսեւորումներ պայմանաւորուած էին նաեւ հոգեւոր-դաւանաբանական հանգամանքներով: Այսպէս, օրինակ՝ Ֆրեզնոյում խառնամուսնութիւնները աւելի յաճախադէպ էին անտարանական հայերի շրջանում: Ընդ որում՝ սրանք, ամուսնանալով այլազգի բողոքականի հետ, աւելի դիւրին էին մշակութափոխում, քանի որ կրօնական հայեացքների նոյնութիւնը օգնում էր էթնկական տարբերութիւնների հարթեցմանը: Նոյնը չի կարելի ասել այլազգիների հետ ամուսնացող հայ առաքելական եկեղեցու հետեւորդների մասին: Վերջիններս ամէն կերպ ձգտում էին յստակ պահել ազգային սահմանները եւ դրանով իսկ մեծ պատնէշ էին ստեղծում խառնածին ընտանիքում: Ըստ Նելսոնի՝ խառնամուսնութեան էին դիմում անտարանական հայերի մօտաւորապէս 11,34%ը, իսկ առաքելական հայերի՝ 7,35%ը¹⁵:

Թէեւ ակնյայտ էր խառնամուսնութիւնների բացասական ազդեցութիւնը ազգային եւ լեզուամշակութային արժէքների վրայ, եւ մեծ էր դրանցից բխող ծովման հնարաւորութիւնը, այնուամենայնիւ ակնյայտ էր նաեւ այն, որ դրանք ինքնըստինքեան նպաստում էին հայութեան համարկմանը ամերիկեան հասարակութիւնում: Իսկ դա, մի կողմից, խիստ ցանկալի էր տասնամեակներ շարունակ ինքնահաստատման ճիգեր գործադրող ֆրեզնոյաբնակ հայութեան համար: Իհարկէ, չի կարելի չարձանագրել, որ համարկումը խառնամուսնութիւնների միջոցով Ֆրեզնոյի շատ հայերի

կողմից մերժում էր եւ խիստ դատապարտում: «Յեղասպանութիւնն ու բռնագաղթը վերապրած հայերը, խիստ բացասաբար էին վերաբերում խառնամուսնութիւններին՝ իրաացիօրէն դրանք համարելով մեծագոյն վրանգ մայրենի լեզուի, մշակոյթի պահպանման, ընդհանրապէս իրենց՝ որպէս ազգամշակութային հանրութեան գոյութեան համար»¹⁶:

Պէտք է ստել, սակայն, որ Բ. սերնդի որոշ ծնողների մօտեցումը խառնամուսնութիւնների հանդէպ արդէն այնքան էլ պահպանողական չէր, մանաւանդ երբ խօսքը վերաբերում էր հայ տղամարդկանց մասնակցութեամբ խառնամուսնութիւններին. «...Նախընտրում ենք հայուհի հարսներ ունենայ, սակայն չենք առարկի, եթէ մեր զաւակը օտարի հեղ ամուսնանայ»: Իսկ ոմանք նոյնիսկ այն կարծիքին էին, որ խառնամուսնութիւնները կարող են հիմք դառնալ իւրօրինակ ընտանիքների ստեղծման համար¹⁷:

Բոլոր դէպքերում, ընդունող հասարակութիւնը այս կամ այն կերպ հայութեանը պարտադրում էր կեցութեան ու մշակոյթի իր օրէնքներն ու օրինաչափութիւնները: Իսկ դա իր հերթին ձեւատրում էր այդ երկրում ապաստանած հայութեան՝ ազգային-էթնիկ ասանդական նկարագրից հեռացող ինչ-ինչ յատկանիշներ, արձանագրում մշակութափոխման նոր որակներ:

ԱՆՈՒԱՆԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ

Մշակութափոխման մէկ այլ դրսեւորում էր անուանափոխութիւնը: Այն ընդհանրական էր բոլոր ներգաղթողների համար, քանի որ անուանափոխութեան նպատակը սովորաբար տեղի հասարակութեանը անելի արագ համարկուելն էր, տեղացիներից չտարբերուելը: Սակայն երետոյթը առանել ընդգծուած դրսեւորումներ ունեցաւ Ֆրեզնոյի հայութեան շրջանում: Այստեղ արդէն անուանափոխութեան պատճառը շատ յաճախ ինքնութիւնը, ազգութիւնը թաքցնելն էր: Եւ սա համատարած էր թէ՛ դպրոցահասակների, թէ՛ մեծերի շրջանում: Առաջին դէպքում խնդիրը հոգեբանական էր: Ի տարբերութիւն ԱՄՆ միա նահանգների, որտեղ եւս առկայ էր հայ պատանիների ու երիտասարդների մշակութային ինքնութեան պահպանման հարցը, Ֆրեզնոյում վերջիններս դրա հետ մէկտեղ խնդիր ունէին նաեւ պաշտպանուելու տեղացիների խտրական վերաբերմունքից: Դպրոցում տիրող հայատեացութեան մթնոլորտը, անվերջանալի ծաղրն ու անարգալից վերաբերմունքը այնքան անտանելի էին հայ աշակերտների համար, որ նրանք երբեմն փորձում էին ձեւացնել, թէ իբր հայ չեն՝ մոռացնել տալով իրենց ինքնութիւնը: Իրավիճակը շատ պատկերատու նկարագրում է Միրաքը. «Հանրային դպրոցներում դիտազգած պապանիներին սովորեցնում էին, որ հայկական անուանումների եւ հին ասանդոյթների ու գաղափարների պահպանումը սխալ է եւ հակաամերիկեան: ...Սա մեծապէս ցնցում էր այդ պապանիներին, որոնք փոքրուց սովոր էին հպարտանալ իրենց նախնիներով, լեզուով ու մշակոյթով»¹⁸:

երկրորդ դեպքում, եթե մի կողմ թողնենք մեծահասակների հոգեբանական խոչընդոտները, առաել էական էր ընկերային գործոնի դերը: Շատ հայ բժիշկներ, փաստաբաններ, անշարժ գույքի գործակալներ ստիպուած փոխում էին իրենց ազգանունները, քանի որ տեղացիները հակուած չէին դիմելու հայկական ազգանունով մասնագէտի: Անուանափոխութեան էին դիմում նոյնիսկ հասարակ հողատարածք գնելու համար, որպէսզի, համաձայն հողային սահմանափակող օրէնքների, չմերժուէին¹⁹:

1907ի Հայրենիքում Ֆրեզնոյում հայերի անուանափոխութեան մասին հրատարակուած մի յօդուածի հեղինակը ներկայացնում է իրեն յայտնի շուրջ 3 տասնեակ անուն-ազգանուններ՝ յանելով, որ այդ ցուցակում չեն ընդգրկուել նորածիններին տրուած ամերիկեան անունները²⁰: Բանն այն է, որ շատ անելի դիպին ու տարածուած էր նորածիններին ամերիկեան անուններ տալը, քան հայկական ազգանուն փոխելը: Անուանափոխութիւնը սովորաբար կատարում էր ազգանուան բառային իմաստի անգլերէն թարգմանութեամբ կամ պարզապէս նմանութեամբ՝ յաճախ կրճատելով ձայնաւորները կամ հանելով **եան** մասնիկը, օրինակ՝ Ագատեանը դառնում էր Ֆրիմըն (Freeman), Անուշեանը՝ Սուիթ (Sweet), Առաքելեանը՝ Արքլին (Arklin), Ալլանեանը՝ Լայըն (Lion), Թագաւորեանը՝ Քինգզ (Kings)....:

Այդուհանդերձ, անուանափոխութիւնը շատ հայերի կողմից արժանանում էր խառնամուսնութիւնից ոչ-պակաս բացասական վերաբերմունքի: Այն արմատներից հեռանալու իրովի ձեւ էր, քանի որ ազգանունը ընկալուած էր նախնիներից ժառանգութիւն, որով հայերը տարբերակուած էին որպէս առանձին ազգ:

Հայկական ազգանունների եւ ընդհանրապէս հայերէնի պահպանման խնդիրը ամերիկահայութեան մէջ զարգանում էր նաեւ թուրքերէնի ազդեցութիւնից ազատուելու ուղղութեամբ: Յատկապէս Տեղասպանութիւնից յետոյ Կալիֆորնիայի հայութեան որոշ շրջաններում պարբերաբար քըննարկուած էր թուրքերէն ազգանունները հայերէնով փոխարինելու հարցը, որի վերաբերեալ բանավէճերը տեղի հայ պարբերական մամուլում աւերնդիատ էին: Ոմանք ամէն բան հայացնելու ձգտումը համարում էին ցեղային ատելութիւն, ազգայնամոլութիւն. ոմանց կարծիքով էլ՝ թուրքերէնից ազատուելը ազգասիրութեան, ազգային արժանապատուութեան հարց էր: «Այլեւս պէտք չունինք թուրք լեզուին. պէտք չունինք թրքիմասսոյ մականուններուն. պէտք չունինք թերթերու մէջ նոյն իսկ թրքահայ գրելու: Կըրնանք պարզաճօրէն ըսել Հայաստանի-հայ»՝ կարդում ենք Ասպարէզում²¹:

ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Այնուամենայնիւ, Ֆրեզնոյի հայութիւնը ժամանակի ընթացքում ստիպուած էր ընդունել ազգային-մշակութային նկարագրի փոփոխութեան որոշակի պայմաններ ու կանոններ: Ինչպէս գրում է Էդուարդ Մելքոնեանը,

ցանկանալով հնարատրինս արագ ներգրաուել ընդունող հասարակութիւնում՝ հայերը ծգտում էին որդեգրել բնիկ՝ նոյնպէս քրիստոնեայ ժողովրդի կենցաղն ու ընկերամշակութային արժէքները: Յանուն դրա նրանք միաժամանակ հարկադրուած էին սահմանափակել իրենց ազգային, ասանդական մշակոյթի դրսետրումները²²:

Մինչեւ 1900ականների սկիզբը Կալիֆորնիայի հայերը կենտրոնացած էին Ֆրեզնո քաղաքում եւ նրա շուրջը: Սակայն ներգաղթի նոր ալիքների առաջացումով աճում է սահմանամերձ փոքր եւ միջին գիւղական ասանների (ինչպէս օրինակ՝ Ֆաուլըր, Սելմա, Քինգզբըրգ, Ռիդլի, Թուլերի, Եդէմ, Վաթթէ) հայութեան թիւը: Ընդ որում՝ ընտանեկան կեանքը առաւել մեծ թափով էր զարգանում հենց այդտեղ: Իզուր չէ, որ այդ բնակավայրերում ծնելիութեան տոկոսը անլի բարձր էր Ֆրեզնո քաղաքի համեմատ: Օրինակ՝ 1905, 1910 եւ 1915ին գիւղական ասաններում գրանցուել է 171 ծնունդ, իսկ Ֆրեզնո քաղաքում՝ 100²³: «Այգիներու աճման հետ նաեւ կ'աճի հայ գաղութին թիւը: Այս փարի գրեթէ ամէն փուն փոքրիկ մըն ալ ունեցած է»՝ Վաթթէյի հայ գաղութի մասին գրում է Ասպարէզը²⁴:

Խօսելով գիւղական ասաններում հաստատուած հայ ընտանիքների կենցաղի մասին՝ պէտք է շեշտել, որ այստեղ բնակուելուց յետոյ նրանք համակուած էին գիւղատնտեսութեան բնագաւառում յաջողութիւնների հասնելու գաղափարով, հողատարածքներ ձեռք բերելու, տուն-տեղ ստեղծելու ձգտումով: Խաղողագործութիւնը ընտանեկան զբաղմունք էր տեղի հայերի համար: Ոչ միայն կանայք էին օգնում իրենց ամուսիններին, այլեւ երեխաները. աղջիկ թէ տղայ, մեծ թէ փոքր լծուած էին այդ աշխատանքին: Այդ մասին է վկայում Կոչնակը. «Հագիւ հասարակ ուսում մը կ'առնեն, կը նեփուին չամիչին աշխարհն. նիփն անլի հրապուրիչ, անլի սիրելի, եւ անլի կարետոր է քան մփայլին պաշարն... Դեռահաս պարանիներն արօրին եւ խոփին եփուէն կը վազեն եւ դեռահաս օրիորդներն ալ իրենց կակուղ մարներովն գործարաններու մէջ պփղաթթութիւններու եփուէն ինկած են, եւ աս'ղ թորշումեալ այլերով դուրս կը նեփուին երբ այլեա հարսի պփղուէն»²⁵: Պետական դպրոցներում դասերի աւարտից յետոյ հայ պատանիներն ու օրիորդները անմիջապէս տուն էին վերադառնում, որպէսզի օգնէին ծնողներին այգեգործութեան աշխատանքներում՝ յաճախ բաց թողնելով պատանեկան կեանքի ուրախութիւնները վայելելու հնարատրութիւնը: Սակայն ամերիկեան միջավայրը ստիպում էր, որ ընտանիքի հանդէպ յարգանքը, պարտքի զգացումը աստիճանաբար տեղի տան ազատ ու ինքնուրոյն կեանքի ծգտումին: Այդ միջավայրին յատուկ որոշ սովորոյթներ ու բարքեր պարզապէս ասանդախախտութիւն էին հայ երիտասարդի համար: Ծնողի նկատմամբ սէրն ու պատկառանքը, խոնարհ հնազանդութիւնը շփումի անվիճարկելի պայմաններ էին հայերի համար: Մինչդեռ տեղացի դպրոցահասակների համար տարօրինակ էր ծնողին այդչափ հնազանդուելը: Հայ պատանիներն ու օրիորդները տանը ապրում, հաղոր-

դակցում ու դաստիարակում էին մի ձեռով եւ բոլորովին այլ բան տեսնում պետական դպրոցներում կամ փողոցում՝ տարեկից օտարազգիների միջավայրում: Այսպէս, օրինակ՝ «հայ մնալու համար պէտք է խօսել հայերէն» մօտեցումը ընդունուած էր շատ հայ ընտանիքներում: Մինչդեռ ամերիկեան մշակոյթի հետ անընդմէջ շփումը հայ երիտասարդին ստիպում էր աստիճանաբար հեռանալ լեզուական եւ մտածական ասանդական արժէքներից: Այդ ազդեցութիւնները ժամանակի ընթացքում սողոսկում էին ընտանիք, հայկական միջավայր, գաղութի հանրային եւ մշակութային կեանք՝ շատ յաճախ դուրս մղելով ազգայինը, հայկականը: Ըստ Ջընդեսանի՝ Ֆրեզնոյի շրջանում հայութեան առաջին սերնդի 78,85%ը տանը խօսել է հայերէն, իսկ երկրորդ սերնդի՝ ընդամէնը 44,4%ը²⁶:

Այդուամենայնիւ, հայերի կենցաղի որոշ սովորոյթներ չէին փոխում: Օրինակ՝ Ֆրեզնոյի եւ շրջակայքի հայերը նախապատուութիւնը տալիս էին իրենց ասանդական՝ հայկական ուտելիքներին, որոնցից շատերի պատրաստման եղանակը կամ մթերքներից ու կերակուրներից արձակուող հոտերը անսովոր, յաճախ նաեւ տհաճ էին տեղացիների համար: Քիչ չէին դէպքերը, երբ հայ պատանիներին դպրոցում ծաղրում էին սոխ ու սխտորի հոտերով բոլբոլու համար: Սակայն պարզում է, որ այդուհանդերձ ասանդական ուտելիքներ օգտագործելու իարցում առաջին եւ երկրորդ սերունդների ընտրութիւնը շատ չէր տարբերում: Ջընդեսանի նոյն վիճակագրութեան տուեալներով՝ տանը հայկական կերակուր նախընտրել են առաջին սերնդի 79,4%ը եւ երկրորդ սերնդի՝ 71,4%ը²⁷:

Մշակութափոխման գործընթացից դուրս էին մեծահասակները, որոնք արդէն հաստատուն էին իրենց հայեացքներում: Ինչպէս գրում է *Կոչնակը*, Արեւմտեան Հայաստանից այստեղ գաղթած տարեցները նոյն նախապաշարումի եւ «անգիտութեան» ճանկերի մեջ էին, տեղի քաղաքակրթութիւնը, բարքերն ու սովորոյթները բնաւ չէին ազդել նրանց վրայ, մանաւանդ որ ամբողջ օրը անցկացնում էին խաղողի այգիներում՝ հեռու քաղաքի անցուդարձից²⁸:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մշակութափոխումը մշտապէս ուղեկցել է հայ գաղթականութեանը: Ինդիլըր ծառացաւ նաեւ Կալիֆորնիայի հայ գաղութի վրայ, մասնաւորապէս Ֆրեզնոյում, երբ վերջինս 1930ականներին դարձաւ գաղթական հայութեան ընկերատնտեսական եւ հոգեւոր-մշակութային խոշոր կենտրոններից մէկը Մ. Նահանգներում: Ֆրեզնոյի շրջանի հայութիւնը ե՛ւ ազգային ինքնապահպանումի ենթագիտակցական մղումներով, ե՛ւ հանրային ու ընտանեկան կեանքում մշակութային ասանդոյթների պահպանման գիտակցումով միջամտութեամբ փորձում էր չկորցնել հայկական նկարագիրը: Սակայն ամերիկեան միջավայրը պարտադրում էր իրենը՝ իր մշակոյթը՝ լեզու, կենցաղավարութեան նորմեր, կրթութեան ու դաստիարա-

կույթեան ինչ-ինչ եղանակներ են.: Մի տեսակ աննկատ օրինաչափութեամբ ընդունող երկրի կողմից համարկումի միակ եղանակ էր "հրամացում" այդ անխուսափելի ճանապարհը: Միշտ չէ, որ օտար միջավայրի առաջ հայութեանը յաջողում էր չընկրկել եւ չարձանագրել նահանջներ նոյն հանրային եւ ընտանեկան կեանքի տարբեր դրսեւորումներում՝ խառնամուսնութիւն, անուանափոխութիւն, նահանջ՝ ազգային ասնդոյթներից եւ լեզուական մշակոյթից, զիջումներ՝ պարզ կենցաղի մէջ են.: Այդ ամէնը վայրիվերումներով արտայայտում էր ե՛ւ Ա., ե՛ւ Բ. սերնդի հայերի մէջ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Մշակութափոխում եզրոյթը, այստեղ գործածում ենք «մշակոյթների փոխազդեցութիւն, մշակութային իդայատկութիւնների, տարրերի փոխանցում» իմաստով: Մշակութափոխումը գերակայ մշակոյթի բաղադրիչները որդեգրելու եւ միեւնոյն ժամանակ սեփական մշակոյթի արժէքները պահպանելու գործընթացն է:
- ² R. Mirak, *Torn between Two Lands: Armenians in America 1890 to World War I*, Cambridge (Massachusetts), Harvard University Press, 1983, էջ 271:
- ³ Գ. Պըլտեան, «Ինքնութեան Փորձառութիւն Սփիւռքի Մէջ», *Ինքնութեան Հարցեր Տարեգիրք*, Երեւան, «Զանգակ-97» Հրատ., 2002, էջ 89-90:
- ⁴ Փ. Հայտօսութեան, «Ինքնութեան Կերտման Հիմնական Գործոնները Սփիւռքի Մշակութային եւ Բաղաքական Ենթահողին Վրայ», *Հայկական Ինքնութեան Ինտիդները 21րդ Դարում Գիտաժողովի Նիւթեր*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2013, էջ 12-3:
- ⁵ Ֆրեզնոյում հայերի հանդէպ խտրականութեան հիմքում ընկած էր բնիկապաշտութիւնը (nativism): Դա ԱՄՆ անկլօսաքսոն ժողովուրդների մէջ ԺԹ. դարավերջին տարածած ազդեցիկ շարժում էր, որը շօշափելի դրսեւորումներ ունեցաւ ազգային քաղաքականութեան ոլորտում: Շարժման հիմնական նպատակն էր ամէն կերպ սահմանափակել «անցանկալի» ներգաղթողների մուտքը ԱՄՆ, նրանց քաղաքական, քաղաքացիական ու տնտեսական իրաւունքները երկրում: Բնիկապաշտութեան ամենաէական դրսեւորումը գաղթականների քաղաքացիութեան հարցն էր, իսկ արդէն 1921-24ին՝ ներգաղթի սահմանափակման օրէնքների ընդունումը: Սակայն Ֆրեզնոյում բացի երկրի կառավարութեան օրէնքներից՝ գործում էին նաեւ նահանգային օրէնքներ՝ ուղղուած «անցանկալի» գաղթականների, այդ թում՝ հայերի դէմ (Յասմիկ Եսայեան, «Հայերի Իրաւական Կարգավիճակի Ֆրեզնոյի Շրջանում (1880-1920-ական թթ.)», *Վէմ Համահայկական Հանդէս*, Ը (ԺԴ) տարի, թիւ 4(56), Հոկտեմբեր-Դեկտեմբեր, 2016):
- ⁶ Էդուարդ Մելքոնեան, «Խառնամուսնութիւնները եւ Ազգային Ինքնութիւնն Արեւմուտքի երկրների Հայ Համայնքներում. Հայեացք Երեւանից», *Հայ Ինքնութեան Որակների Պահպանումը Խառնամուսնութիւններում Գիտազործնական Համաժողովի Զեկուցումների Ժողովածու*, Երեւան, «Բաիդ» Հրատ., 2010, էջ 23:
- ⁷ R. Tracy LaPiere, "The Armenian Colony of Fresno: A Socio-Psychological Study of Prejudice", Unpublished Ph. D. dissertation, Department of Sociology, Stanford University, 1930, էջ 190:
- ⁸ *Հայրենիք*, Պոստոն, 25 Մայիս 1907, էջ 4:

- ⁹ Մուշեղ Եպիսկոպոս, «Գալիֆորնիոյ Գաղութը», *Ամերիկահայ Տարեցոյց, Ա. րարի*, Պոստոն, 1912, էջ 61:
- ¹⁰ LaPiere, էջ 195:
- ¹¹ H. Nelson, "Intermarriage Among Fresno Armenians", *Sociologus*, Vol 4, №1, Berlin, 1954, էջ 45, 46:
- ¹² Նոյն, էջ 44:
- ¹³ M. A. Jendian, *Intermarriage and Assimilation*, New York, LFB Scholarly Publishing LLC, 2008, էջ 4:
- ¹⁴ Nelson, էջ 47, 48:
- ¹⁵ Նոյն, էջ 48:
- ¹⁶ Մելքոնեան, էջ, 24:
- ¹⁷ Nelson, էջ 54:
- ¹⁸ Mirak, էջ 161-2:
- ¹⁹ Այս մասին մանրամասն տե՛ս՝ A. Minasian "Settlement Geography of Armenians in Fresno. Part II," *The Armenian Review*, Autumn, 1972, № 4-100, էջ 58:
- ²⁰ Հայրենիք, 27 Ապրիլ 1907, էջ 3:
- ²¹ Ասպարէզ, Ֆրեզնո, 25 Օգոստոս 1916, էջ 3:
- ²² Էդուարդ Մելքոնեան, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Պատմութիւն, Երեւան, «Մուլնի» Հրատ., 2005, էջ 463:
- ²³ LaPiere, էջ 208:
- ²⁴ Ասպարէզ, 15 Օգոստոս 1913, էջ 4:
- ²⁵ Կոչնակ, Պոստոն, 16 Փետրուար 1907, էջ 107:
- ²⁶ Jendian, էջ 75:
- ²⁷ Նոյն:
- ²⁸ Կոչնակ, Պոստոն, 16 Փետրուար 1907, էջ 107:

EXPRESSIONS OF ACCULTURATION IN THE FRESNO AREA AMONG FIRST AND SECOND GENERATION ARMENIANS (1900-1930s)
(Summary)

HASMIK YESAYAN
hasmiktk@yahoo.com

Acculturation has accompanied Armenians throughout their Diasporic life. The Armenians living in a foreign milieu were not always able to stand strong and resist the diverse demands of public and family life like exogamy, changes of first names, and compromises in the mother tongue and national traditions as well as in everyday life.

The paper highlights how acculturation expressed itself among the first and second generation Fresno Armenians in the 1930s, when Fresno became a socio-economic and spiritual-cultural center for Armenian migrants in the USA.